12.qxd 07/06/2026 17:03 Page 1

ԳԵՂԱՄԱ ՇԱՐԺՈՒՄ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 5 հունիսի 2026թ. թիվ 12 (640)

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Հայաստանը պաշտոնապես միանում է արհեստական բանականության գլոբալ ենթակառուցվածք ունեցող երկրների շարքին՝ ներկայանալով աշխարհի տեխնոլոգիական առաջատարների կողքին:

Գեղարքունիքի մարզի Գագարին համայնքում հունիսի 1-ին տեղի ունեցավ Eleveight AL ընկերության կողմից կառուցված արհեստական բանականության առաջին գործարանի բացման պաշտոնական արարողությունը:

Ընկերությունը ներկայացնում է տարածաշրջանի առաջին NVIDIA Blackwell B300 ԱԲ գործարանը:

Նոր կենտրոնը նախատեսված է արհեստական բանականության մեծածավալ հաշվարկները սպասարկելու համար՝ սկսած արհեստական բանականության մոդելների ուսուցումից մինչեւ բիզնես, գիտական եւ ինժեներական կիրառություններ:

Նախագծի առաջին փուլի ներդրումները կազմում են 120 միլիոն դոլար:

Գագարինի ԱԲ գործարանի առաջին փուլում տեղակայված է 512 GPU: Կենտրոնն այս պահին գործում է 1.2 մեգավատ էլեկտրական հզորությամբ: Նախատեսվում է այն հետագայում հասցնել 5, իսկ վերջնական փուլում՝ 35 մեգավատի: Այդ ընդլայնումը հնարավորություն կտա բազմապատկել կենտրոնի հաշվարկային ներուժը, տեղակայել հազարավոր նոր սերնդի AI պրոցեսորներ եւ ձեւավորել տարածաշրջանային արհեստական բանականության ենթակառուցվածքային կենտրոն:

-Արհեստական բանականության դարաշրջանում հաշվողական հզորությունը դարձել է ռազմավարական ենթակառուցվածք: Հայաստանը պետք է ոչ միայն հետեւի այս փոփոխություններին, այլ նաեւ մասնակցի դրանց ձեւավորմանը: Eleveight AL-ը ստեղծվել է հենց այս նպատակով՝ տարածաշրջանում կառուցելու համաշխարհային մակարդակի արհեստական բանականության ենթակառուցվածք՝ դնելով Հայաստանին գլոբալ տեխնոլոգիական քարտեզի վրա,- ասաց Eleveight AL ընկերության համահիմնադիր եւ գործադիր տնօրեն Արման Ալեքսանյանը:

Գերժամանակակից ենթակառուցվածը կառուցվել է NVIDIA Reference Architecture ստանդարտներով, ինչը նշանակում է, որ միջազգային տեխնոլոգիական ընկերությունները եւ հետազոտական թիմերը կարող են իրենց AL նախագծերը տեղափոխել եւ գործարկել Հայաստանում՝ առանց տեխնիկական ինտեգրման լրացուցիչ խնդիրների:

Տեխնոլոգիական բացառիկ հզորությունից բացի, նախագծի հիմքում դրված էկոլոգիական պատասխանատվության սկզբունքը: Ենթակառուցվածքն աշխատում է «Զրոյական քիմիական հետքի» մոդելով: Շնորհիվ Գագարինի բարձր լեռնային կլիմայի եւ օդային հոսքերի ինժեներական լուծումների՝ համակարգը տարվա 11 ամիսների ընթացքում օգտագործում է բնական սառեցման մեխանիզմներ՝ բացառելով քիմիական սառեցման նյութերի կիրառումը: Ընկերությունը տիրապետում է նաեւ սեփական արեւային կայաններին՝ ապահովելով օգտագործվող մաքուր էներգիայի ամբողջական վերահսկողություն եւ երկարաժամկետ կայունություն:

Կարեւորելով նորարարությունն ու նպաստելով Հայաստանի տեխնոլոգիական ինքնիշխանությանն ու էկոհամակարգի զարգացմանը՝ Eleveight AL-ը նախատեսել է իր ընդհանուր հաշվարկային հզորության 20 տոկոսի հասանելիություն հայկական համալսարանների, հետազոտական կենտրոնների եւ ոչ առեւտրային նախաձեռնությունների համար տեղական տաղանդի ներուժի իրացման եւ գիտական նորարարությունների խթանման նպատակով:

Արհեստական բանականության գործարանի բացման պաշտոնական արարողությանը մասնակցել են նաեւ Հայաստանի բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, պաշտոնական այլ անձինք:

«ԱՐՄԵՆՊՐԵՍ» լրատվական գործակալություն

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ երեխաներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ:

Այս օրը եւս մեկ առիթ է ընդգծելու, որ յուրաքանչյուր երեխա արժանի է սիրով, հոգատարությամբ եւ անվտանգ միջավայրում մեծանալու, կրթություն ստանալու, երազելու եւ իր կարողությունները լիարժեք դրսեւորելու հնարավորությանը:

Երեխաները մեր ամենամեծ հարստությունն են, մեր ներկան ու ապագան: Նրանց ժպիտները, անկեղծությունն ու անսահման երազանքները մեզ պարտավորեցնում են՝ կառուցել ավելի բարեկեցիկ, անվտանգ եւ հնարավորություններով լի պետություն:

Այս տոնական օրը մաղթում եմ բոլոր երեխաներին անհոգ ու երջանիկ մանկություն, առողջություն, հաջողություններ եւ բազմաթիվ գեղեցիկ ձեռքբերումներ: Թող ձեր կյանքը լի լինի սիրով, ջերմությամբ, նոր բացահայտումներով եւ իրականացված երազանքներով:

Շնորհավոր տոնդ, սիրելի՛ փոքրիկ սերունդ: Դուք մեր հույսն եք, մեր ուժն ու վաղվա օրվա վստահությունը:

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Վարդենիս քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցին համարվում է Գեղարքունիքի մարզի պատմաճարտարապետական գեղեցիկ կոթողներից մեկը, թեեւ ընդամենը մեկ դարից քիչ ավելի տարիք ունի:

Այն կառուցված է 1902-1912 թվականներին, ավելի հին ժամանակներից գոյություն ունեցած եկեղեցու տեղում, ինչի մասին վկայում է ոչ միայն Հայ Առաքելական եկեղեցու նշանավոր գործիչ, հնագետ եւ պատմաբան Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը իր «Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գավառի» աշխատության մեջ, այլ նաեւ եկեղեցու շրջակայքում տարածվող պատմական գերեզմանոցը, որտեղ պահպանվել են միջնադարյան խաչքար-տապանաքերեր:

Եկեղեցու հատակագիծը խաչաձեւ է, գմբեթը՝ սլացիկ: Գմբեթի թմբուկի վրա կան երկարավուն լուսամուտներ: Կառուցված է գունագեղ եւ սրբատաշ բազալտով, ունի 3 կամարակապ դռներ: Այստեղ մինչեւ 19-րդ դարի վերջերը պահվել են մի քանի ձեռագիր ու հին տպագիր գրքեր:

Ահա թե ինչ է վկայում Մեսրոպ Սմբատյանցը, ով գիտական փաստահավաք հատուկ առաքելությամբ Վարդենիս կամ Վասակաշեն բնակավայր է այցելել 1863 թվականին: «Վերջապես գնալով հասանք Բասարկեչար գյուղը, որ հնումն Վասակաշեն անուն ուներ, որը ո՞վ գիտե Սյունյաց ո՞ր Վասակ իշխանն է հիմնել, հայտնի ուրացող Վասա՞կը՝ թե Գաբուռն անվանյալ Վասակը, կամ գուցե մի ուրիշ Վասակ իշխան: Վասակաշենը մեծ գյուղ լինելով, մի, երկու օր մնացինք, եւ պարապեցինք եկեղեցական դպրոց բանալու վերա. բայց ժողովուրդը շատ դանդաղ էր շարժում: Եկեղեցին հանուն սուրբ Աստվածածնի վերանորոգված էր չորս տարով առաջ. խաչկալն հին ձեւով էր շինված առանց զարդուց: Եկեղեցվո հիմնադիրն էր Սիմեոն քահանայն, ինչպես եւ մատրան մեծ քարի վերա գրած էր: Բեմի առաջին կան երկու գերեզմանաքարեր, որոց միույն վերա գրած էր. «Այս է հանգիստ Հովհաննես վարդապետին, ՌԼԲ.» (1583): Եվ մյուսույն վերա գրած. «Աստ հանգչի մարմին Սարգիս վարդապետի, Ռ. (1551)»:



Առաքել պատմագիրն (ՇԴ. 472), գրե. «Ի սույն թվին (ՌԼԲ. 1583), եղեւ վախճան մեծ եւ երանաշնորհ վարդապետին մերո Հովհաննիսի. որ էր երկրեն Ծարա. ի վանիցն Թադեւ սրբո Առաքելույն... եւ էր նա աշակերտ մեծ վարդապետին Ղուկասու Հախբատեցվո, հույժ սրբասեր եւ Աստվածասեր, հեզ եւ աղոթող, քարոզ ուղղափառաց եւ հանդիմանող ստահակաց, սիրող ուղղությանց եւ պատվող տոնախմբությանց, հույժ ընթերցասեր եւ գրասեր, մինչ զի բազում գրյանս ետ գրել յուրն հիշատակ, եւ այլ սպասք եւ զարդք եկեղեցվո հոլովք, եւ ալեւորյալ եւ լիավուրբք հանգյավ ի Քրիստոս ՌԼԲ թվականիս մերո. որո պատվական մարմինն եդյալ կա ի երկիրն Գեղամա ի գյուղն Վասակաշեն, հուպ դամբարանի վարդապետին Սարգսի. հիշատակ նոցա օրհնությամբ եղիցի...»:

/շարունակությունը՝ էջ 4-ում/

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՔՐՄԱՆ 3 ԿԱՅԱՆ ԿԿԱՌՈՒՑՎԻ

Հայաստանի Հանրապետության մարզերում առաջնահերթ լուծում պահանջող անհետաձգելի ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ կառավարության 2026 թվականի մայիսի 21-ի հերթական նիստում որոշում է կայացվել՝ Գեղարքունիքի մարզին հատկացնել 73 միլիոն 470?4 հազար դրամ՝ որից 31 միլիոն 719 հազար դրամը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանի կառուցման, 30 միլիոն 872.4 հազար դրամը՝ Մարտունի քաղաքի ապակենտրոնացված մաքրման կայանի կառուցման աշխատանքների իրականացման համար:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, 10 միլիոն 879 հազար դրամ էլ հատկացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքի Տ. Մեծի-4 վթարված շենքի բնակիչների կողմից 2026 հունիսի 1-ի դրությամբ

կատարված եւ կատարվելիք ծախսերի փոխհատուցման համար:

Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից ստացված տեղեկատվության համաձայն՝ Մարտունի քաղաքում կենսաբանական մաքրման 2 կայան կկառուցվի՝ յուրաքանչյուրը 30 միլիոն 872 հազար դրամ արժեքով: Դրանցից մեկը կկառուցվի Մարտունի-Գեղհովիտ բնակավայրերի սահմանաբաժան գոտում, որը կենսաբանական մաքրման կենթարկի առանց զտման Մարտունի գետ լցվող Գեղհովիտ գյուղի կոյուղաջրերը, իսկ երկրորդը կկառուցվի Մարտունի եւ Վաղաշեն բնակավայրերի սահմանաբաժան հատվածում, Մարտունի-Վարդենիս մայրուղու հարեւանությամբ, «Կարասու» գետակի վրա, որի ջրերը ռելիեֆային ցածր դիրքի պատճառով ինքնահոս եղանակով Մարտունու մաքրման կայան լցվելու հնարավորություն չունեն:

Կենսաբանական այս կայանը կսպասարկի տվյալ թաղամասի շուրջ 150 տնտեսությունների կարիքները:

Գեղհովիտի հատվածում կենսաբանական մաքրման կայանի կառուցման նպատակով ՀՀ կառավարության կողմից համապատասխան գումարը հատկացվել է 2026 թվականի հունվար ամսին:

Գավառի համայնքապետարանի աշխատակազմից ստացված տեղեկության համաձայն՝ մաքրման կենսաբանական կայանը կկառուցվի Հացառատ թաղամասում, որտեղ նախորդ տարի ՀՀ կառավարության հրատապ ծրագրերի շրջանակներում կառուցվել էր 805 գծամետր երկարության կոյուղագիծ՝ 400 բնակչի սպասարկման համար: Նոր կառուցվող կենսաբանական մաքրման կայանում կզտվեն այս կոյուղագծի կեղտաջրերը:

Կենսաբանական մաքրման երեք կայաններում էլ շինարարական աշխատանքները կմեկնարկեն առաջիկայում:

Երեք մաքրման կայանների նախագծերն էլ պատվիրվել են Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից, «EU4Svan» ծրագրի շրջանակներում:

«Գեղամա աշխարհ»

ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՎԵՐԱԶԻՆՎԵԼ Է ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՄԱԼԻՐ ԲՈՒԺՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ

Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի բժշկական կենտրոնը ՀՀ Առողջապահության նախարարության կողմից տրամադրված միջոցներով վերազինվել է ժամանակակից բժշկական համալիր սարքավորումներով:

Ինչպես տեղեկացրեց Գավառի ԲԿ տնօրեն Գարիկ Սողոմանյանը, բժշկական կենտրոնը վերազինվել է վերջին սերնդի լապարոսկոպիկ սարքավորումներով, կոլոնոսկոպով, գաստրոսկոպով, որը թույլ է տալու ժամանակակից բուժսպասարկում, բուժապահովում իրականացնել: Այս վերազինումների շնորհիվ բուժառուները ստանալու են որակյալ եւ ժամանակակից բուժօգնություն:

-Առողջապահական ապահովագրության շրջանակներում մեր բնակիչները ակտիվ դիմում են կենտրոնին, վստահում են կենտրոնին, եւ ես կարող եմ վստահ ասել, որ մեր շարժը կրկնակի, եռակի անգամ շատացել է: Ընդհանուր վիրաբուժական, գինեկոլոգիական, ուռոլոգիական, վնասվածքաբանական եւ կրծքային վիրաբուժության միջամտություններն արդեն հնարավոր է կատարել բարձր ճշգրտությամբ եւ արդյունավետությամբ,- հավաստեց ԲԿ տնօրենը:

Գավառի բժշկական կենտրոնը վերազինվել է նաեւ նոր էնդոսկոպիկ համալիրով, որը ներառում է նաեւ ուռոլոգիական սարքավորումներ, այդ թվում՝ ռեզեկտոսկոպ, ցիստոսկոպ, որոնք թույլ են տալիս կատարել էնդոսկոպիկ միջամտություններ՝ ուռոլոգիական խնդիրների հետ կապված: Նախկինում նույնպես կատարվել են այս միջամտությունները, սակայն նոր համալիրը թույլ է տալիս ավելի արդյունավետ, ավելի որակյալ տեսանելիությամբ կատարել էնդոսկոպիկ միջամտությունները: Նոր սարքավորումները հնարավորություն են տվել՝ մարզային բուժհաստատությունում իրականացնելու վիրահատական ցանկացած միջամտություն՝ հետվիրահատական առավել թեթեւ ընթացքով:

Արդիականացվել են նաեւ սոնոգրաֆիկ հետազոտությունները. բուժհաստատության ախտորոշիչ բաժանմունքը վերազինվել է ժամանակակից շարժական սոնոգրաֆիկ սարքով: Այն տրամադրել է Գավառի համայնքապետարանը:

Մարզային բուժհաստատության վերազինումը վերջին սերնդի սարքավորումներով ապահովում է որակյալ բուժծառայություն՝ մարզի բնակիչներին հնարավորություն տալով խուսափելու մայրաքաղաքային բուժհաստատություններ հասնելու դժվարություններից:

Անահիտ Կարեյան

ՄԱԴԻՆԱՅՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՏԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2026 թվականի ապրիլից սկսվել եւ ընթանում են ոռոգման ջրատարի արտաքին ու ներքին ցանցի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Մադինայի ոռոգման ջրատարի արտաքին ու ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 86 միլիոն 216 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Մադինայի ոռոգման ջրատարի արտաքին ցանցի կառուցում երկաթյա կիսախողովակներով, 2000 գծամետր երկարությամբ, որից 800 մետրը կազմում է մինչեւ գյուղ հասնող մայր առուն, իսկ մնացած 1200 մետրը կառուցվում է գյուղի 6, 7 եւ 10-րդ փողոցներում:

2026 թվականի մայիսի 22-ի դրությամբ շինարարական աշխատանքներն իրականացվել են շուրջ 60 տոկոսով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո 2026 թվականի ոռոգման շրջանի մեկնարկից ոռոգման ջուրը Մադինայի 70 տնտեսությունների կմատակարարվի ժամանակին եւ անկորուստ: Շինարարությունը նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի հուլիսի առաջին կեսի ընթացքում:

«Գեղամա աշխարհ»

ԼԻՃՔՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 21 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք գյուղում 2018-2025 թվականներին ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ու պետական ծրագրերի շրջանակներում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 21 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կազմել է 1 միլիարդ 492 միլիոն 42 հազար 566 դրամ:

Սուբվենցիոն ծրագրերի ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 1 միլիարդ 424 միլիոն դրամ, պետական ծրագրերի ուղղությամբ կատարված ներդրումները՝ 67 միլիոն 100 հազար դրամ:

Իրականացված սուբվենցիոն ծրագրերի արդյունքում կառուցվել է 16883 մետր երկարության խմելու ջրատարի արտաքին ու ներքին ցանց, 2 աղբյուրակապ եւ օրվա կարգավորիչ ջրամբար, 2352 մետր ոռոգման ջրատար ցանց, 9840 մետր արտաքին լուսավորության ցանց, մանկապարտեզի խաղահրապարակ, հիմնանորոգվել է մշակույթի տունը եւ 7856 գծամետր ներհամայնքային նշանակության ճանապարհ:

Պետական ծրագրի շրջանակներում, 67 միլիոն 100 հազար դրամի ներդրմամբ, միակողմանի սալիկապատ մայթ է կառուցվել Երեւան-Վարդենիս մայրուղու՝ Լիճք բնակավայրի ներսով անցնող հատվածում՝ շուրջ 800 մետր երկարությամբ:

ՎԱՐԴԵՆԻԿԻ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՏԱՐ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄՈՏԵՆՈՒՄ ԵՆ ԱՎԱՐՏԻՆ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտին են մոտենում ոռոգման ցանցի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Վարդենիկի ոռոգման ջրատար ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 126 միլիոն 711 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է ոռոգման ջրատարի արտաքին ու ներքին ցանցի կառուցում «Փոցխան առվի» հատվածում, Կամո Շահինյան եւ մի քանի այլ փողոցներում, 2700 գծամետր երկարությամբ, երկաթբետոնյա կիսախողովակներով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի նոյեմբերից եւ 2026 թվականի մայիսի 26-ի դրությամբ իրականացվել շուրջ 90 տոկոսով:

Ծրագրի իրականացման արդյունքում այս տարվա ոռոգման շրջանի մեկնարկից ոռոգման ջուրը Վարդենիկի շուրջ 400 տնտեսությունների ոռոգման ջուրը կմատակարարվի անկորուստ ժամանակին:

12.qxd 07/06/2026 17:03 Page 3

ԾԱԿՔԱՐՈՒՄ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2026 թվականի մայիսի սկզբներից սկսվել եւ ընթանում են 4 փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Ծակքարի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 140 միլիոն 660 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Ծակքարի 6, 11, 14 եւ 15-րդ փողոցների ասֆալտապատում, ջրահեռացման եւ ոռոգման համակարգերի կառուցում:

2026 թվականի մայիսի 22-ի դրությամբ շինարարական աշխատանքներն իրականացվել են շուրջ 35 տոկոսով:

Շինարարությունը նախատեսված է ավարտել 2026 թվականի ընթացքում:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ն:

Ծրագրի իրականացման արդյունքում Ծակքարի վերոնշյալ փողոցների բնակիչներն առաջին անգամ ասֆալտապատ ու բարեկարգ ճանապարհից օգտվելու հնարավորություն կունենան:

Ծակքարում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն մեկ այլ ծրագրով արտաքին լուսավորության ցանց է կառուցվում մի շարք փողոցներում:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է է 4 միլիոն 830 հազար դրամ, որի 60 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 40 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է արտաքին լուսավորության ցանցի կառուցում Ծակքարի 4, 5, 7-րդ փողոցներում, 8-րդ փողոցի 1-ին փակուղում, 10-րդ փողոցի 2-րդ փակուղում, 2-րդ փողոցի 1-ին փակուղում, 1300 գծամետր երկարությամբ, ԼԵԴ համակարգով աշխատող 43 լուսատուների տեղադրմամբ:

Շինարարական աշխատանքները սկսվել են 2026 թվականի մայիսի 10-ից եւ մայիսի 25-ի դրությամբ իրականացվել շուրջ 60 տոկոսով:

Ծրագրի իրականացման արդյունքում վերոնշյալ փողոցների բնակիչներն առաջին անգամ արտաքին լուսավորության ցանցից օգտվելու հնարավորություն կունենան:

«Գեղամա աշխարհ»

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՅՍ ՏԱՐԻ «ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ» ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2 ԾՐԱԳԻՐ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում այս տարի «Մասնակցային բյուջետավորման» գործընթացի շրջանակներում 2 ծրագիր կիրականացվի:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, քվեարկության արդյունքում ավելի շատ ձայներ շահած այդ երկու ծրագրերն արժանացել են ՀՀ կառավարության հավանությանը, հաստատվել ու շուտով կմտնեն իրականացման փուլ: Դրանցից մեկը «Մարտունի համայնքի 5 բնակավայրերում դրոնների լաբորատորիաների ստեղծում» ծրագիրն է, որով նախատեսվում է դրոնների լաբորատորիաների ստեղծում Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Ձորագյուղ, Ձոլաքար եւ Վաղաշեն բնակավայրերում: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 41 միլիոն դրամ: Ծրագրի իրականացման շրջանակում պետք է վերանորոգվեն վերոհիշյալ բնակավայրերի մշակույթի տներում լաբորատորիաների ստեղծման նպատակով նախատեսված տարածքները եւ կահավորվեն համապատասխան սարքավորումներով:

Երկրորդը «Վարդենիկի երիտասարդական կենտրոնի հիմնում» ծրագիրն է, որով նախատեսվում է երիտասարդական կենտրոնի ստեղծում Վարդենիկի մշակույթի տան տարածքում: Ծրագրի իրականացման նպատըակով հատկացվող գումարը եւս կազմում է 41 միլիոն դրամ: Ծրագրի իրականացման շրջանակում հիմնանորոգվելու եւ համապատասխան գույքով կահավորվելու է երիտասարդական կենտրոնի համար նախատեսված տարածքը:

Երկու ծրագրերի դեպքում էլ արդեն հայտարարված են շինարարական մրցույթները, հայտնի են հաղթող կազմակերպությունները: Օրենքով սահմանված ընթացակարգերի ավարտից հետո հետո կմեկնարկեն շինարարական աշխատանքները, որոնք կավարտվեն 2026 թվականի ընթացքում:

«Գեղամա աշխարհ»

ՎԱՂԱՇԵՆՈՒՄ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ 2 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կառուցվում է ոռոգման ջրատարի ներքին ցանց, հիմնանորոգվում 32 եւ 38-րդ փողոցները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Վաղաշենի ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 60 միլիոն 752 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է ոռոգման ջրատարի ներքին ցանցի անցկացում Վաղաշենի 34 եւ 43-րդ փողոցներում, 2000 մետր երկարությամբ, երկաթբետոնյա կիսախողովակներով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի մարտ ամսից եւ մայիսի 25-ի դրությամբ իրականացվել շուրջ 80 տոկոսով:

Ծրագրի իրականացման արդյունքում այս տարվա ոռոգման շրջանի մեկնարկից Վաղաշենի տնտեսությունների մոտ 75 տոկոսին ոռոգման ջուրը կմատակարարվի ժամանակին ու անկորուստ:

Վաղաշենի 32 եւ 38-րդ փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 53 միլիոն 197 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է 32 եւ 38-րդ փողոցների ասֆալտապատում՝ 509 գծամետր երկարությամբ, 2500 քառակուսի մետր մակերեսով, ոռոգման ու ջրահեռացման առուների տեղադրում:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի ապրիլից եւ մայիսի 25-ի դրությամբ իրականացվել շուրջ 75 տոկոսով: Շինարարությունն ավարտի կհասցվի հունիսի սկզբին:

Ծրագրի իարկանացման արդյունքում Վաղաշենի նորաստեղծ երկու թաղամասերի բնակիչներն առաջին անգամ կօգտվեն ասֆալտապատ ու բերակարգ ճանապարհներից:

«Գեղամա աշխարհ»

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՑԸ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են կենտրոնական փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմից, Ճամբարակի կենտրոնական փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 608 միլիոն 610 հազար դրամ, որի 55 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 45 տոկոսը՝ Ճամբարակի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է ճանապարհի երթեւեկելի մասի հիմնանորոգում՝ 1400 գծամետր երկարությամբ եւ 11780 քառակուսի մետր մակերեսով, մայթերի վերակառուցում, ջրահեռացման համակարգի տեղադրում, այլ աշխատանքներ:



Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի նոյեմբերից ու վերսկսվել 2026 թվականի ապրիլից: 2026 թվականի մայիսի 14-ի դրությամբ իրականացվել ընդհանուր աշխատանքների շուրջ 17 տոկոսը:

Ծրագիրը նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի աշնանը:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Ճան Շին» ՍՊԸ-ն:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԼԵՈՅԻ ՓՈՂՈՑԸ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքի Լեոյի փողոցում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2026 թվականի ապրիլից սկսվել եւ ընթանում են Լեոյի փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմից, Ճամբարակի Լեոյի փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 147 միլիոն 735 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Ճամբարակի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Ճամբարակի Լեոյի փողոցի երթեւեկելի մասի եւ երկողմանի մայթերի սալիկապատում ասֆալտապատում բազալտով, ջրահեռացման համակարգի տեղադրում՝ 293 գծամետր երկարությամբ: Սալիկապատվող մակերեսը կկազմի 3190 քառակուսի մետր:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականի ընթացքում:

12.qxd 07/06/2026 17:03 Page 4

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Այս Յովհաննես վարդապետի Ծարեցվո գերեզմանը պարզ երեւում էր եկեղեցվո մեջ, բեմի առաջին, ինչպես գրեցի: Իսկ Սարգիս վարդապետի գերեզմանը, հազիվ էր երեւում. որ իհարկե մի նշանավոր մարդ կը լիներ, որ պատմիչը հիշում է անունը:

Եկեղեցվո շրջապատումն կային շատ արձաններ. որոց մի խաչքարի վերա գրված էր. «Աստված ողորմի քաջ Զաւիրապին»: Այս քարի աջակողմումն գրված էր. «Այս է նշան սուրբ Արարչին, ճրագ հոգոյն քաջ Զաւիրապին, կանգնեցավ ձեռամբ յուր հաւրն Ովաննեսին, եւ յուր ծնողին, Փաշախաթունին, հիշեցեք ի Քրիստոս»: Կից սորա. «Աստված ողորմի Յովհաննես աղին, Աստված ողորմի Փաշախաթունին, ՋԵ.»(1456): Այս քարի ձախակողմի վերա գրած էր. ,Աստուծով մեք Ովհաննես եւ եղբայրն իմ Դավիթ կանգնեցաք զխաչերս բարեխաւս ծնողաց մերոց: Ի թվ. ՌԸ. ՌԺ.» (1559, 1561): Կար եւ «Զ. Պ. Ջ.»թվականով խաչեր, (1251, 1351, 1451):

Այս գյուղի ժողովուրդը 1830 թվին գաղթած էին Հին Պայազդու Դիադին գյուղից, այդ պատճառավ նոցա լեզուն եւ բնությունը քիչ տարբեր էին մյուս գյուղերի ժողովրդից»,-վկայում է Մեսրոպ Սմբատյանցը:

Իսկ ի՞նչ է գրում եկեղեցու մասին հայագետ Երվանդ Լալայանը, ով 1910 թվականին այցելել է Վարդենիս: «Գյուղը զգալի կերպով առաջանում է եւ նմանվում քաղաքի: Կան մի քանի կանոնավոր փողոցներ, բավական լավ տներ, մոտ 20 խանութներ եւ արհեստանոցներ: Գյուղի կենտրոնում գտնվում է հայոց եկեղեցին, որ նոր են կառուցել, քանդելով հինը: Սա բավական գեղեցիկ է, սրբատաշ քարից, գմբեթազարդ: Հին եկեղեցու բեմի առջեւ եղել են գերեզմանաքարեր՝ հետեւյալ տապանագրերով. «Աստ հանգչի մարմին Սարգիս վարդապետի. թվ. Ռ/1551/, Այս է հանգիստ Յովհաննէս վարդապետին. թվ. ՌԼԲ/1583/»:

Այս երկու վարդապետներին հիշում է Առաքել Դավրիժեցին, ասելով, որ սրանցից Հովհաննեսը Ծարա երկրից էր, Թադեոս առաքյալի վանքից, Հաղբատեցի Ղուկաս մեծ վարդապետի աշակերտը. սրբասեր ու գրասեր, որ շատ գրքեր էր գրել տվել եւ եկեղեցու սպասներ եւ զարդեր շինել տվել. եւ որ «ՌԼԲ թվականիս մերոյ հանգեաւ ի Քրիստոս եւ մարմին նորա եդեալ կայ ի յէրկիրն Գեղամայ ի գիւղն Վասակաշէն, հուպ դամբարանի վարդապետին Սարգիսի»:

«ԺԳ-ԺԵ դարերի թվականները կրող բազմաթիվ խաչերի մեծագույն մասը արդեն կոտրատված, եւ շինություններ վրա է գործածված. մի քանիսը միայն այժմ կանգնեցված են եկեղեցու շուրջը: Այս խաչքարերից մեկի վրա փորագրված է. «Այս է նշան սուրբ Արարչին. ճրագ հոգվոյն քաջ Զաւիրապին, կանգնեցաւ ձեռամբ իւր հաւրն Ովաննէսի աղին, Աստուած ողորմի Փաշախաթունին ՋԵ /1456/»: Նույն խաչքարի աջ կողմին՝ «Աստուած ողորմի քաջ Զաւիրապին»: Ձախ կողմին՝ «Աստուծով մեք Ովհաննէս եւ եղբայրն իմ Դավիթ կանգնեցաք բարեխաւս ծնողաց մերոց ի թվ.ՌԸ.ՌԺ/ 1559.1561/»:

Երեւում է, որ հարյուր տարի հետո այս խաչքարը վերցրած է իր տեղից եւ դրված մի ուրիշ ննջեցյալի վրա, եւ առանց ջնջելու առաջին տապանագիրը, գրել են երկրորդը:

Վասակաշենից դեպի արեւելք, «Աղբյուրի ակներ» կոչվող տեղամասում կա մի գյուղատեղի, ուր նկատելի են եկեղեցու հիմնապատեր եւ մի քանի խաչքար, սակայն առանց գրության:Այստեղից էլ փոքր-ինչ արեւելք, «Քռերում», կա մի գյուղատեղի, եկեղեցով ու խաչքարերով, բայց առանց գրության: Վասակաշենի այժմյան բնակիչները հայեր են՝ Տաճկաստանի Դիադին գավառի Թավլի, Աղզաբար եւ Սորանչի գյուղերից 1830 թվականին գաղթած: Ընդամենը 330 տուն, 1189 արական, 1183 իգական, միասին՝ 2372 հոգի: Ունեն պետական տարրական դպրոց: Պարապում են երկրագործությամբ եւ անասնապահությամբ, առեւտրով ու արհեստներով»,-գրում է Երվանդ Լալայանը:



Վարդենիսի Սուրբ Աստվածածին եկեղեցուն ավելի մանրամասն անդրադարձել է անվանի հայագետ, վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը:

«Գյուղի հին անունը եղել է Վասակաշեն, 10 հարկ չափով, ըստ Ստեփանոս Օրբելյանի ցուցակի, որից երեւում է, որ, ըստ իր մեծության, միջակ գյուղերի շարքում է: Այժմ այստեղ պահպանված ամենահին հուշարձան-խաչքարն ունի 1426 թվականը եւ գտնվում է գերեզմանատան մեջ, բայց Սմբատյանը հիշատակում է եկեղեցու մոտ մի խաչքար, որը կրել է Չ /1251/ թվականը:

Գյուղում արձանագրություն ունեցող հուշարձանները երկու վայրում են՝ գերեզմանատանը, որը գտնվում է գյուղի արեւելյան եզրին, շատ ընդարձակ է, բայց նոր բացված խճուղին, անցնելով նրա միջով, բաժանել է այն երեք անջատ մասերի, որոնցից երկուսի մեջ կան հին թվականներով գերեզմանական հուշարձաններ եւ Սուրբ աստվածածին եկեղեցու բակում:

Ներկա եղեղեցին բոլորովին նոր է, շինված 20-րդ դարի սկզբում, հնի վայրում, այն հիմնովին քանդելուց հետո: Այդ պատճառով էլ նրա ներսում եւ շրջապատում եղած գերեզմանական հին հուշարձանները վնասվել, կորել կամ մասամբ էլ տեղահան են եղել: Մնացածներից երեւում է, որ բակում եղել է ընդարձակ գերեզմանատուն: Խախտված խաչքարերը հավաքված եւ շարված են եկեղեցու պատերի տակ, մի մասն էլ մնացել է իրենց տեղերում: Ներկա ժողովածուում այս գյուղից ամփոփված են 29 արձանագրություն, որոնցից միայն 6-ն են հրատարակված եղել»,-գրում է Բարխուդարյանը:

Տեղում ուշադիր զննելով Սուրբ Աստվածածին եկեղեցու եւ նրանից քիչ արեւելք գտնվող ու երկու մասի բաժանված գերեզմանոցի տարածքները, ինչպես նաեւ հենվելով վերը նշված պատմագիտական վկայությունների վրա, եկանք այն եզրակացության, որ Սուրբ Աստվածածնի մոտից մինչ հին գերեզմանոցների արեւելյան վերջավորությունը ժամանակին կազմել են մեկ ընդհանուր ամբողջություն՝ գործելով մի քանի հարյուրամյակ շարունակ:

Պատմաբան, խաչքարերի արվեստի ուսումնասիրությամբ զբաղվող Սեւակ Արեւշատյանի վկայությամբ՝ այստեղ պահպանված որոշ անարձանագիր խաչքարեր իրենց պատրաստման ոճով վերաբերում են 9-17-րդ դարերին: Միանգամայն պարզ է նաեւ, որ գերեզմանոցն առավելապես տակնուվրա է եղել թե՛ եկեղեցու, թե՛ խճուղու շինարարությունների ընթացքում, որոնց արդյունքում վնասվել կամ հողի տակ են անցել բազմաթիվ խաչքար-տապանաքարեր, որոնցից շատերը կարող էին վկայել այս հուշարձանի շատ ավելի հստակ ժամանակագրությունների մասին:

Այն, որ Վասակաշեն-Վարդենիս բնակավայրի պատմությունը սկսվում է հեռավոր, անհիշելի ժամանակներից, ոչ մեկի մոտ կասկած չպետք է հարուցի, քանի որ նրան բոլորեքյան շրջապատող բնակավայրերն անխոս կրում են հազարամյակների պատմության դրոշմները: Հնագիտական ծանրակշիռ ուսումնասիրությունները փաստում են Ծովակի, Կարճաղբյուրի, Ախպրաձորի, Ակունքի, Այրքի, Սոթքի, Նորաբակի տարածքներում վաղ բրոնզեդարյան կամ երկաթեդարյան ամրոցների, բնակատեղիների գոյության մասին, որոնց մեջտեղում ընկած ու ռազմավիրական ճանապարհների հատման կետ հանդիսացող տարածքը երբեք չէր կարող որեւէ պատմական մեծ ու փոքր տեղաշարժերի արդյունքում որեւէ ժամանակ մնալ անմարդաբնակ:

Վարդենիս-Վասակաշենը, գտնվելով Արցախ եւ Ուտիք աշխարհներ տանող ճանապարհների հանգույցում, շատ հաճախ է ենթարկվել ասպատակությունների ու ավերածությունների, եղել մեծ բանակների բախման ռազմաբեմ: Սերունդների հիշողության մեջ դեռ թարմ են ոչ միայն Արցախյան գոյամարտերի հետ կապված իրադարձությունները, այլ նաեւ՝ այստեղ 1918-1919 թվականների ընթացքում թուրք հրոսակների դեմ մղված ինքնապաշտպանական ծանր մարտերը:

Բասարգեչեր օտարահունչ ու եղծված անունն էլ ուղիղ ձեւով կապվում է մի պատմական արհավիրքի հետ, որ հայ սերունդների գլխին բերել է մեծ նվաճող, արյունարբու Լենկթեմուրը: Արցախի կողմից հսկայական բանակներով ասպատակ սփռելով ու լեռնաշղթաների օղակից դուրս գալով Մասրիկի ընդարձակ հարթավայր եւ շարժվելով դեպի Սեւանի ավազանի խորքերը, մարդկության ամենասոսկալի դահիճներից մեկն արտաբերել է՝ Բասարգեչեր, որը թուրքերեն նշանակում է՝ ոտնակոխ արեցի, անցա...

Վարդենիսի հին գերեզմանատանը պահպանված մի տապանաքարի արձանագրություն վկայում է պարսից Շահ Աբասի Վասակաշեն գալու մասին, որից միայն կարելի է հետեւություն անել, թե նրա կազմակերպած բռնագաղթից հետո ինչ է մնացել այս շենից: Ահա Սեդրակ Բարխուդարյանի կողմից վերծանված այդ արձանագրությունը. «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՐՈՆ ՎԱԽՍԻՆ ԿՈՂԱԿԻՑ ՊԱՐՈՆ ՀԱԽՆԱԶԱՐԻՆ ՄԱՅՐ ՆԷՆԱՂՏԻՆ: ՓՈԽՎԵՑԱՎ ՔՐԻՍՏՈՍ ԷՆ ՏԱՐԻՆ, ՈՐ ՇԱՀ ԱՊԱՋՆ ԵԿԱՎ ԵՐԿԻՐՍ. ՈՎ ԿԱՐԴԱՅ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ. ԹՎ ՌՃԲ /1603/»:

Գերեզմանոցի խաչքարերից մեկին արձանագրված է. «ԱՅՍ ԱՐՁԱՆ ՆԵՐԿԵԱԼ ԱՐԵՄԱԲՆ ՔՐԻՍՏՈՍԻ Ի ԲԱՐԵԽՈՍ ՀՈԳՈ ՄՈՒՐԱԴԻՆ. ԹՎ. ՊՀԴ/1425/:

Մեկ այլ խաչքարի վրա կարդում ենք. «ԵՍ ՊՈՒՏԱԽՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՈՍ ՈՐԴՈՅ ԻՄ ՄԱՐԳԱՐԻՆ. ԹՎ. ՁԿԹ/1520/:

Իրար կից կանգնած երեք խաչքարերից երկուսի վրա գրված է. «ԵՍ ԹԱԹՈՍ ԷՐԷՑՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՀԱՒՐ ԻՄ ՓԱՆՈՍԻՆ ԵՒ ԵՂԲԱՅՐԻ ԻՄ ԱՄԻՐԲԵԿԻՆ. ԹՎ. ՁՂԷ/1548/: «ԵՍ ԹԱԹՈՍ ԷՐԵՑՍ ԿԱՆԿՆԵՑԱ ԽԱՉՍ ՄՈՐ ԻՄ ՂԱ....»:

Մեծ, խորանարդաձեւ տապանաքարի հարավային կողին կա ցլանման կենդանի, իսկ ետեւը՝ շրջանակ, մեջը՝ խաչ, խաչի շուրջը եւ կենդանու ոտքերի արանքում արձանագրված է 5 տող.«ԹՎ ՌՂԱ/1642/ ՄԵԼԻՔ ԱՇՊԻՆ, ՅՈՒՐ ԿՈՂԱԿԻՑ ՓԱՇԻԿԻՆ»:

Օրորոցաձեւ, մեծ տապանաքարի հարավային երեսին նկատվում են երկու հեծյալ որսորդներ, արանքում՝ եղջերու, ոտքերի տակ՝ վիշապ, շրջանակներին՝ 4 տող արձանագրություն. «ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՈՍ ՄԻՐԶԱԽԱՆԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ՊԱՂԻՆ, ՅԻՇԵՑԵՔ Ի ՔՐԻՍՏՈՍ ԹՎ. ՌճԺԱ/1662/»:

Ճամփին մոտ ընկած մի տափակ տապանաքարին արձանագրված է. «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԻՍԱՅԽԱՆԻՆ, ՈՐԴԻ ԽԱՉԱՏՈՒՐԻՆ ԹՎ. ՌճԿ /1711/ »:

Սա վկայում է այն մասին, որ Վասակաշեն-Վարդենիսում 18-րդ դարում էլ հայ բնակչությունը շարունակել է ապրել ու արարել:

Գերեզմանոցի խաչքար-տապանաքարերի ներքո ամփոփված են նաեւ Բարսեղ քահանայի, Մելիքբեկի, Ամիրբեկի, Ղարագյոզի աճյունները, ինչի մասին փաստում են վերծանված արձանագրությունները:

Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում պահպանված ամենահին թվակիր արձանագրությունը վերաբերում է 1451 թվականին. «ԿԱՄԱՎՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՍ ՅՈՎԱՆԷՍ ԿԱՆԿՆԵՑԻ ՁԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀՈՐՆ ԻՄ ԸՌԸՍՏԱԿԵՍ ՔԱՀԱՆԱՅԻՆ, ՈՐԴԻ ՄԻՐԱՆՇԻՆ, ԹՈՌՆ ԱՎԱՆԵՍԱՅ. ՅԻՇԵՑԵՔ Ի ՔՐԻՍՏՈՍ»:

Գեղաքանդակ մի խաչքարի վրա արձանագրված է միայն ՁԿԱ /1512/ թվականը: Եկեղեցու բակի խաչքար-տապանաքարերը 16-17-րդ դարերի ընթացքում դրվել են Ավանեսի, Ավատի ու նրա կողակցի, Գուլաղի, Ովանէս աղայի ու նրա կողակից Խանաղի, Շահում աղայի, Ովանէս քահանայի, Տեր Աստվածատուրի շիրիմներին:

Եկեղեցու հյուսիսային պատին հենած խաչքարի թեւերի շուրջը եւ ստորին մասում կարդում ենք հուզական գիրը. «ԱՅՍ ԱՐՁԱՆ ՕԾԵԱԼ ԱՐԵՄԱԲՆ ՅԱՐԱՐՁԱԿԱՆ, ԿԱՆԿՆԵԱԼ ՎԱՍՆ ՅՈՀԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՀՈԳՈՅՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԹՎ. ՌԽԷ/1598/: ՍՈՒՐԲ ՆՇԱՆՍ ՈՒԼՈՒԽԱՆԻՆ է»:

/շարունակությունը՝ էջ 5-ում/



12.qxd 07/06/2026 17:03 Page 5

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Որոշ խաչքար- տապանաքարերին պահպանված է Մանվել նկարչի անունը:

Հետաքրքրություն է առաջացնում եկեղեցու բակի հարավային կողմում կանգնած խաչքարը, որի վրա արձանագրված է. «ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՔԱՋ ՁԱՒՀՐԱՊԻՆ. ԱՅՍ Է ՆՇԱՆ ՍՈՒՐԲ ԱՐԱՐՉԻՆ, ԵՐԱԳ ՀՈԳՈՅՆ ՔԱՋ ՁԱՒՐԱՊԻՆ. ԿԱՆԿՆԵՑԱՎ ՁԵՌԱՄԲ ՅՈՒՐ ՀՈՐՆ ՈՎԱՆՆԻՍԻՆ, ՅՈՒՐ ԾՆՈՂԱՑ ՓԱՇԱՅԽԱԹՈՒՆԻՆ. ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈՍ. ՄԱՆՎԵԼ /ՆԿԱՐԻՉ/»:

Իսկ խաչքարի դիմաց տեղադրված է օրորոցաձեւ մի տապանաքար, որի հարավային կողին պատկերված է հեծյալ եւ հետիոտն որսորդներ, որոնք ձեռքերին ունեն լարած աղեղներ, իսկ նրանց արանքում կա եղջերու: Հյուսիսային կողին երեք խորաններ են, որոնցից առաջինի մեջ երկլարանի սազ նվագողն է, նրա կողքին պատկերված է հաց եւ ուտելիքի պնակ: Կենտրոնի խորանում պատկերված մարդն իր ձեռքում պահել էգինու գավը, իսկ երրորդ խորանում պատկերված է մեծ կճուճ՝ վրան դրած գավ, իսկ շրջանակներին արձանագրված է 4 տող. «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՔԱՋ ՁԱՒՀՐԱՊԻՆ.ՍԱ ԷՐ ՈՐԴԻ ՈՎԱՆԷՍ ԱՂԻՆ. ՓՈԽՎԵԱՎ ՔՐԻՍՏՈՍ ՆՈՐԻՆ ԴԱՌՆ ՍՈՒՔ ԵԴՈՂ ՓԱՇԱՅԽԱԹՈՒՆԻՆ»

Զոհրապի խաչքարի կողքին կողքին էլ կանգնած է մեկ այլ գեղաքանդակ խաչքար, որի վրա արձանագրված է. «ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՈՎԱՆԷՍ ԱՂԻՆ»:

Արձանագրություններից հասկացվում է, որ Զոհրապը կյանքից հեռացել է ավելի վաղ, քան իր ծնողներ Ովանէս աղան ու նրա կին Փաշախաթունը՝ նրանց թողնելով ծանր վշտի մեջ:

Միայն ենթադրել կարելի է, որ Զոհրապը զոհվել է մարտում կամ որսի ժամանակ: Նրան տրված քաջ պատվաբեր տիտղոսը խոսում է նրա հերոսական գործի մասին:

Վարդենիսի Սուրբ Աստվածածին եկեղեցին օծվել է 1912 թվականի մայիսի 12-ին՝ ձեռամբ Տեր Գեւորգ Տեր Նիկողոսի Մանվելյանի: Ի դեպ, այս երեւելի անձնավորությունը եկեղեցական գործերի հետ մեկտեղ ակտիվորեն մասնակցել է ազգապահպան գործերին ու Վարդենիսի ինքնապաշտպանական մարտերին, որոնք մղվել են 1918-1919 թվականների ընթացքում: Նորակառույց ու նորաօծ եկեղեցու առաջին մկրտվողը եղել է Վարդենիս քաղաքի բնակիչ Ասատուր Խլոյանը, առաջին կնունքի խաչքավորը՝ Հովհաննես Բոյախչյանը: Եկեղեցու կառուցման արձանագրությունը գտնվում է կենտրոնական գմբեթի եւ մեծ խաչի միջեւ ընկած գնդի վրա:

Սուրբ Աստվածածինը գործել է մինչեւ 1937 թվականը, որից հետո խորհրդային իշխանության կողմից փակվել է ու վերածվել կոլտնտեսության հացահատիկի պահեստի:

Այն վերաբացվել ու վերաօծվել է 1957 թվականին, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի ջանքերով եւ ձեռամբ Սահակ Արքեպիսկոպոս Փիրումյանի: Եկեղեցու հոգեւոր հովիվ է նշանակվում Տեր Հակոբ ավագ քահանա Երանոսյանը: Նրա մահից հետո եկեղեցու հոգեւոր հովիվ է նշանակվում որդին՝ Տեր Հակոբ Երկրորդ քահանան, ով պաշտոնավարել է մինչեւ 1988 թվականը: 1988-1992 թվականներին եկեղեցու հոգեւոր հովիվ է նշանակվել Տեր Արամ ավագ քահանա Հունանյանը: 1980-1986 թվականին եկեղեցում ընթացել են վերանորոգման աշխատանքներ, որոնց ավարտից հետո օծվել է Սուրբ սեղանը ձեռամբ Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյանի:

2013 թվականին, Տեր Հակոբ Երկրորդ քահանայի մահից հետո հոգեւոր հովիվ է նշանակվում Հայր Անդրանիկ աբեղան, ում մեկ տարի անց փոխարինել է Տեր Տարոն քահանա Հունանյանը:

2018 թվականին Տեր Տարոն քահանա Հունանյանի նախաձեռնությամբ ու Վարդենիս քաղաքի բնակիչ Վարդան Բուդոյանի հովանավորությամբ սկսվում է եկեղեցու զանգակատան վերակառուցումը, որն անավարտ էր մնացել ավելի քան մեկ դարի ընթացքում: Զանգակատունը վեր է բարձրացել եկեղեցու արեւմտյան կողմում: Զանգակատան գմբեթի վերնամասում լցվել է Վարդենիս քաղաքի բնակիչ Մացո Դանիելյանի կողմից Արեւմտյան Հայաստանի Դիադին քաղաքից բերված հողը, ապա տեղադրվել Խաչը:

2022 թվականից Վարդենիսի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ է կոչվել Տեր Հարություն քահանա Հունանյանը:

Վարդենիսի Սուրբ Աստվածածին եկեղեցին մի անկրկնելի զարդ է Հայաստանի Հանրապետության արեւելյան սահմանի մոտ, Մասրիկի լայնածավալ հարթավայրում, որ վեր է խոյանում որպես հայականությունը կրող ու պահպանող արժեք, ազգային հավատի սրբացած տուն:

Խոսրով Խլղաթյան

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ Է ԿԱՏԱՐԵԼ ՀՌՈՄԻ ՍԱՊԻԵՆԶԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի արտաքին կապերի եւ լրատվության բաժնի վարիչ, օտար լեզվի եւ գրականության ամբիոնի դասախոս Լիլիթ Թոռչյանը դասախոսական աշխատանք է կատարել Իտալիայի Հանրապետության Հռոմի Սապիենզայի համալսարանում:

Դասախոսություններն անցկացվել են Արվեստի եւ հումանիտար գիտությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների բաժնի ուսանողների համար՝ «Մշակույթների պատմություն» դասընթացի շրջանակում: Դասախոսությանը ներկա են եղել ուսանողներ Իտալիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից, Եթովպիայից, Ճապոնիայից եւ Չինաստանից:

Դասախոսությունների թեման եղել է Հայաստանի, Անգլիայի եւ Իտալիայի բանահյուսության համեմատական վերլուծության շուրջ, մասնավորապես, խոսվել է երեք երկրների մշակութային բազմազանության, դրանց միջեւ նմանության եւ տարբերության, ծննդյան, հարսանեկան եւ մահվան ծիսակարգերին առնչվող ավանդույթների մասին:

Համեմատական վերլուծության մեթոդով զուգահեռներ են անցկացվել նաեւ հայկական «Սասնա Ծռեր», անգլիական «Բեովուլֆ» եւ իտալական «Աստվածային կատակերգություն» էպիկական ստեղծագործությունների միջեւ:

Ներկաները նաեւ ծանոթացել են հայկական մշակութային առանձնահատկություններին, լսել հայկական ժողովրդական երգեր, դիտել «Բերդ» ազգային պարը եւ համեմատություն անցկացրել Հայաստանյան եւ իրենց երկրների մշակույթների, էպոսների եւ վաղ շրջանի գրական ստեղծագործությունների միջեւ:

ԳՊՀ արտաքին կապերի եւ լրատվության բաժին

ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում ճանապարհաշինական հերթական սուբվենցիոն ծրագրի շրջանակներում այս տարի մեկնարկել եւ շարունակվում են «Սեւան քաղաքի Աշոտ Երկաթ, Կոմիտաս, Բաբաջանյան, Ելենովկա, Բարեկամության, Խաղաղություն փողոցներ» ասֆալտապատման աշխատանքներե ենթածրագրով ներառված աշխատանքները:

Աշխատանքների մեկնարկը տրվել է Խաղաղության փողոցից, որը ներառում է 712 գծամետր: Ենթածրագրի պայմանագրային արժեքը կազմում է 153 միլիոն 255 հազար 560 դրամ է, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը:

Խաղաղության փողոցի հիմնանորոգմանը զուգահեռ՝ կենսունակությունը կորցրած ծառերը փոխարինվելու են նորերով՝ ապահովելով տարածքի անվտանգ եւ ներկայանալի տեսքը:

Հիմնանորոգման հաջորդ հասցեն Կոմիտաս փողոցն է, որը ներառում է 220 գծամետր տարածք: Ենթածրագրի պայմանագրային արժեքը 29 միլիոն 484 հազար 590 դրամ է, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը: Աշխատանքները ներառում են ասֆալտբետոնե ծածկույթի կտրում, հիմքի իրականացում, բիտումի տարածում, ծածկույթի պատրաստում, դիտահորերի եւ անձրեւընդունիչների ծածկի սալերի ապամոնտաժում եւ վերատեղադրում, դիտահորերի պատերի բարձրացում, անձրեւընդունիչների մաքրում եւ այլ շինաշխատանքներ:

Օրագրի շրջանակներում նախատեսված են նաեւ քաղաքի Բաբաջանյան, Ելենովկա, Բարեկամություն, Աշոտ Երկաթ փողոցների ասֆալտապատման աշխատանքները:

Արմինե Ղուկասյան

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ ԶԲՈՍԱՅԳԻՆ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Կարճաղբյուր գյուղում տեղական բյուջեի միջոցների հաշվին սկսվել եւ ընթանում են զբոսայգու վերակառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, ծրագրով նախատեսված է հիմնովին փոխել նախկին բազալտե պարիսպը, վերակառուցել տարածքում գտնվող հուշարձանը եւ երեսապատել պատվանդանը: Բարեկարգման աշխատանքների շրջանակում շուրջ 450 քառակուսի մետր տարածքում տարածքում հիմնվելու է սիզամարգ՝ դեկորատիվ թփերի տնկմամբ, ինչպես նաեւ ձեւավորվելու են ծաղկանոցներ: Եվս 200 քառակուսի մետր տարածքում իրականացվում է անցուղիների սալիկապատում: Նախատեսվում է նաեւ բազալտե սալերով նոր մուտքի կառուցում:

Այգու արեւելյան հատվածում կառուցվում են մինի ֆուտբոլի եւ բասկետբոլի խաղադաշտեր՝ բնակավայրի երիտասարդների եւ երեխաների ակտիվ հանգիստն ու մարզական առօրյան խթանելու նպատակով:

Գլխավոր մուտքից դեպի հուշարձան տանող հատվածում տեղադրվելու են Կարճաղբյուրի զոհված հերոսների հուշատախտակները՝ ի հիշատակ հայրենիքի պաշտպանության համար իրենց կյանքը նվիրաբերած քաջորդիների:

Օրագրով նախատեսված է նաեւ ամբողջ տարածքի արտաքին լուսավորության իրականացում գնդաձեւ լուսատուներով, ինչպես նաեւ երկու զրուցարանի տեղադրում՝ բնակիչների հանգստի եւ ժամանցի կազմակերպման համար:

Զբոսայգում արդեն գործում է երեխաների համար նախատեսված խաղահրապարակը, որն արդեն դարձել է փոքրիկների սիրելի վայրերից մեկը: Բարեկարգ եւ ժամանակակից հանրային միջավայրերի ստեղծումը շարունակում է մնալ համայնքային զարգացման առաջնահերթ ուղղություններից մեկը: Օրագիրն իրականացվում է բացառապես համայնքային բյուջեի միջոցներով, որի ընդհանուր արժեքը կազմում է 65 միլիոն դրամ:

«Գեղամա աշխարհ»

ԶՈԼԱՔԱՐՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 16 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար գյուղում 2018-2025 թվականների ընթացքում սուբվենցիոն եւ պետական ծրագրերով իրականացվել է սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 16 ծրագիր, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 1 միլիարդ 15 միլիոն 141 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 14-ը սուբվենցիոն են՝ 1 միլիարդ 230 միլիոն 141 հազար դրամ ընդհանուր արժեքով, եւ 2-ը՝ պետական՝ 285 միլիոն դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականներին Զոլաքարում կառուցվել է արդի չափորոշիչներին համապատասխանող մանկապարտեզի շենք, 40000 մետր խմելու, 5415 մետր ոռոգման ներքին ու արտաքին ջրատար ցանցեր, 17900 մետր արտաքին լուսավորության ցանց, 2313 մետր գազատար, հիմնանորոգվել 3010 գծամետր ներհամայնքային նշանակության ճանապարհ, Ալվարդ Վարդանյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի շենքը եւ մշակույթի տան մի հատվածը:

Զոլաքարի թիվ 2 միջնակարգ դպրոցի շենքը հիմնանորոգվել եւ արդիականացվել է 2019 թվականին, պետբյուջեի միջոցներով, 187 միլիոն դրամի ներդրմամբ: Ծրագրի առաջին փուլն իրականացվել է 2016-2018 թվականների ընթացքում:

Զոլաքարի մանկապարտեզը հիմքից կառուցվել է 2018-2023 թվականների ընթացքում, ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, բացվել 2024 թվականի փետրվարին: Այն այժմ գործում է 4 խմբով, 96 սանով:

«Գեղամա աշխարհ»

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 26 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում 2018-2025 թվականներին սուբվենցիոն ու պետական ծրագրերով սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության 26 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 8 միլիարդ 19 միլիոն 500 հազար դրամ:

Իրականացված 26 ծրագրերից 21-ը սուբվենցիոն են, որոնց ուղղությամբ ծախսվել է 2 միլիարդ 619 միլիոն 500 հազար դրամ, իսկ 5-ը պետական են, որոնց ուղղությամբ ծախսվել է 5 միլիարդ 400 միլիոն դրամ:

Իրականացված աշխատանքների արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում Մարտունիում կառուցվել է արդի չափորոշիչներին համապատասխանող բժշկական կենտրոն, 36850 քառակուսի մետր մակերես զբաղեցնող սալիկապատ մայթեր, 26195 մետր արտաքին լուսավորության ցանց, 1256 մետր գազատար, 926 մետր ոռոգման ցանց, 950 մետր երկարության խմելու ջրատար ցանց, 300 մետր կոյուղագիծ, հիմնանորոգվել 15294 մետր երկարության ներհամայնքային, միջպետական ու մարզային նշանակության ճանապարհներ, Մարտունու համայնքապետարանի շենքը, 9 բազմաբնակարան շենքերի տանիքներ:

Մարտունու բժշկական կենտրոնը շահագործվել է 2023 թվականի վերջին, որի կառուցման, կահավորման ու տեխնիկական վերազինման ուղղությամբ ծախսվել է 3 միլիարդ 400 միլիոն դրամ: Պետական ծրագրերի շրջանակներում 2022-2025 թվականների ընթացքում հիմնանորոգվել են Սեւան-Մարտունի-Գետափ ավտոճանապարհի՝ Մարտունիով անցնող 3 կիլոմետրանոց հատվածը, Մարտունի-Ներքին Գետաշեն ճանապարհի՝ Մարտունիով անցնող 1 կիլոմետրանոց հատվածը, Սայաթ-Նովա փողոցը: 2025 թվականի հոկտեմբերից սկսվել եւ ընթանում են Երեւանյան եւ Մյասնիկյան փողոցների հիմնանորոգման աշխատանքները: Պետական ծրագրերով իրականացված ճանապարհաշինական աշխատանքների ընդհանուր գումարը կազմում է 2 միլիարդ 297 միլիոն 777 հազար դրամ:

Գեղամա աշխարհ

ԾՈՎԱՍԱՐՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 10 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱԿԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար գյուղում 2018-2025 թվականների ընթացքում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 10 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 809 միլիոն 580 հազար 253 դրամ: Իրականացված ծրագերի արդյունքում 2018-2025 թվականներին Ծովասարում կառուցվել է մանկապապարտեզի շենք, 7500 մետր ոռոգման, 2000 մետր խմելու ջրատար ցանցեր, հիմնանորոգվել 4733 գծամետր ներհամայնքային նշանակության ճանապարհ:

Ծովասարի մանկապարտեզի շենքը կառուցվել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, 2020-2023 թվականների ընթացքում: Շենքի կառուցման, բակային հատվածի բարեկարգման, գույքի ձեռքբերման ուղղությամբ ծախսվել է շուրջ 220 միլիոն դրամ: Արդի չափորոշիչներին համապատասխանող մանկապարտեզն իր դռները գյուղի նախադպրոցական տարիքի երեխաների առջեւ բացել է 2025 թվականի մայիսին: Այն այժմ գործում է 4 խմբով՝ 100 սաներով:

Ծովասար գյուղն իր պատմության մեջ գործող մանկապարտեզ երբեւէ չի ունեցել:

«Գեղամա աշխարհ»

ԴԴՄԱՇԵՆՈՒՄ ՀԱՆԴԻՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՎԵԼ Է ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Դդմաշեն գյուղում հանդիսավորությամբ բացվել է նորակառույց մանկական խաղահրապարակը:

2025 թվականին Սեւան համայնքում իրականացված մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում, որին Սեւան համայնքը միացել էր կամավոր հիմունքներով, Դդմաշեն բնակավայրում մեկնարկել են խաղահրապարակի կառուցման աշխատանքները:

Սեւան համայնքի Դդմաշեն բնակավայրում նախատեսված խաղային հրապարակի կառուցման եւ կահավորման համար Սեւան համայնքի բյուջեից հատկացվել է 5 միլիոն 220 հազար դրամ:

Դդմաշեն բնակավայրի մանկական խաղահրապարակը կահավորվել է նախադպրոցական եւ կրտսեր տարիքին համապատասխան խաղամիջոցներով, տեղադրվել են նստարաններ, կառուցվել է ցայտաղբյուր, տնկվել են ծառեր, տարածքը ցանկապատվել է:

Դդմաշեն բնակավայրի փոքրիկներն այսուհետ ունեն ազատ ժամանցի կազմակերպման եւ անցկացման անվտանգ, հարմարավետ, ապահով, հաճելի միջավայր, որի առաջարկը ծնվել է բնակիչների կողմից, ստացել է ձեւ եւ բովանդակություն համայնքի կողմից եւ համայնքային միջոցներով:

Օրը լիարժեք տոն են դարձրել մուլտիերոսները, խաղավարները, որոնք մի քանի ժամ խաղահրապարակը լցրել են աշխուժությամբ, ծիծաղով ու բազմաթիվ խաղերով, որը եւս համայնքի նվերն էր փոքրիկներին:

Արմինե Ղուկասյան



ԳԵՂՀՈՎԻՏ ԳՅՈՒՂՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՏԱՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցման աշխատանքները:

Գեղհովիտի ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 106 միլիոն 747 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցում Գեղհովիտ գյուղի 1-ին փողոցի 2-րդ փակուղում, 6, 7, 9, 13, 15, 20 եւ 21-րդ փողոցներում, 3730 գծամետր ընդհանուր երկարությամբ, երկթաբետոնյա, առանձին տեղերում՝ երկաթյա խողովակներով:

Շինարարական աշխատանքները սկսվել են 2025 թվականի սեպտեմբերից եւ 2026 թվականի մայիսի 25-ի դրությամբ իրականացվել շուրջ 40 տոկոսով: Շինարարությունը նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի ընթացքում:

Ծրագրի իրականացման արդյունքում հաջորդ տարվա ոռոգման շրջանի մեկնարկից ոռոգման ջուրը Գեղհովիտի տնտեսությունների մոտ 60 տոկոսին, շուրջ 60 հեկտար տարածքում, կմատակարարվի ժամանակին եւ անկորուստ:

ԼԵՌՆԱԿԵՐՏՈՒՄ ԱՎԱՐՏԻՆ ԵՆ ՄՈՏԵՆՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լեռնակերտ բնակավայրում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտին են մոտենում ոռոգման ներքին ցանցի կառուցման աշխատանքները:

Լեռնակերտի ոռոգման ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 13 միլիոն 459 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է ոռոգման ներքին ցանցի կառուցում Լեռնակերտի 1-ին եւ 2-րդ փողոցներում, 500 գծամետր երկարությամբ, երկաթբետոնյա կիսախողովակներով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի մարտ ամսից եւ 2026 թվականի մայիսի 27-ի դրությամբ իրականացվել շուրջ 90 տոկոսով:

Ծրագրի իրականացման արդյունքում այս տարվա ոռոգման շրջանի մեկնարկից արդեն Լեռնակերտի տնտեսությունները շուրջ 15 հեկտար հողամասերում ոռոգման ջուրը կստատան անկորուստ ու ժամանակին:

12.qxd 07/06/2026 17:03 Page 7

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

/սկիզբը՝ նախորդ համարներում/

Այդ առիթով Ռ. Նահապետյանը նկատում է. «Ընտանիքի տարբեր անդամների միջեւ հարաբերությունները պայմանավորված էին գոյություն ունեցող ավանդական նորմերով: Ըստ այդ սովորույթի՝ տաբուացված էր գերդաստանի տարեց անդամների, ամուսինների անուններ տալը: Հարգի էր կնոջը ոչ թե անձնանվան, այլ նրա ծննդավայրի կամ ծնողների անունով դիմելը...»: Ահա առաջին վկայություններից մեկն այն մասին, որ Ծմակուտի անտառապահ Ռոստոմ Մամիկոնյանը ավանդականության կրողն է: Շտապենք նկատել, որ Մաթեւոսյանի ստեղծագործության մեջ ավանդականության կենդանի կրողներից մեկ էլ Ծմակուտն է: «Ծմակը Հրանտ Մաթեւոսյանի արձակում նաեւ հենակետային փոխաբերություն է, որը ամենանեղ իմաստային օղակներով նույնական ուղեծրով ընդարձակվում է որպես էքնոտարածություն՝ ձգտելով նախասկզբին, - ընդգծում է Ս. Ավետիսյանը: - Այսպիսի մոդելավորման պարագայում կունենանք դեպի դուրս ընդարձակվող տուն-ծմակ, գյուղ-ծմակ, գավառ-ծմակ, երկիր-հայրենիք-ծմակ կառույցը: Ծմակն ինքնության խարիսխն է, մեծ իմաստով՝ բնօրրանը, էքնոսի ամրացման ու բնականոն աճի կենսամիջավայրը, իսկ որոշակիորեն տեղայնացված Ծմակուտն է՝ ամրացման կետը հերոսների, ովքեր Մաթեւոսյանի կողմից առաջադրված հակադրությունն էին խորհրդային պարտադրված հնտերնացիոնալիզմին, եւ, անշուշտ, դյուրին չէր լինելու նրանց ծնունդը սոցիալիզմի ծաղկման փուլում»:

Ռոստոմը հասարակ անտառապահ չէ: Նրա առաքելությունը կայանում է մարդու՝ անձնական պատասխանատվությամբ առաջնորդվելով ապրելու մեջ, ընդ որում այդ պատասխանատվությունը պետք է լինի ինքնաբուխ, չպետք է թելադրվի որեւէ սուբյեկտի կամ օբյեկտի կողմից: Հերոսի շրջահայաց դատողությունը նրան մոտեցնում է սեփական ինքնության ճանաչման եւ դրա պահպանման խնդրառությանը: Այս իմաստնությամբ էլ կոնֆլիկտներ են ձեւավորվում Ռոստոմի եւ արտաքին աշխարհի միջեւ կոնֆլիկտները:

Հերոսի մեջ մեկտեղված են Ծմակուտի բոլոր խնդիրները, որոնցից մեկը բազմաթիվ երիտասարդ ընտանիքների հեռանալն է բնօրրանից: Գյուղի բնակչության զգալի մասը ծերեր են:

Ռոստոմը անհրաժեշտություն է համարում ճակատ-ճակատի պայքարելու գնով պահպանել գյուղում երբեւէ երկու հարյուր գլուխ անասուն տեղավորած գոմը: «Վերեւներից» նախատեսել են այն քանդել, իսկ գոմի հողակտորի վրա անտառտնտեսության ղեկավարի համար գետափնյա մենատուն կառուցել. «Երկու հարյուր կով է կապվել էս գոմում, ամեն մայիսի երկու հարյուր հորթ է դուրս եկել էս դռնից, կյանք ու ուրախություն է եղել էստեղ...»: Մենատան կառուցման համար երեսուն կաղնի է պահանջվում, երեսուն կտրված ծառ: Ռոստոմը երեք ձեռնարկներին էլ դեմ է, իսկ ծմակուտցիները համաձայն են նրա հետ: Գյուղացիներին հարազատ է այն, ինչը տարիներ ի վեր ծառայել է իրենց՝ «կալի երեկվա ձայներն ախր դեռ մեր ականջներում էին»:

Ռոստոմ Մամիկոնյանը այն կորովի ծմակուտցին է, որը փորձում է այսօր եղածի Տերը լինել, եւ փոխանցել այն վաղվա տերերին: «Մամիկոնյան» ազգանունը առիթ է ստեղծում հավատալու, որ Տերը նա՛ է, նույնիսկ անկախ այն բանից, որ Վաթանանց Եգորի տղան է: Մի առիթով, հիվանդության քարտը լրացնելիս, Ռոստոմի կինը բուժքրոջը բացատրել է, թե Վաթինյան չէ, թող գոնե Սարգսյան գրի, եթե ոչ, ապա՝ Մամիկոնյան, քանի որ «էս երկիրը Մամիկոնյաններինն է եղել, ինքը Մամիկոնյան է ստորագրում»: Ռոստոմն էլ այդպես է տրամաբանում եւ իր մասին խոսում է «մենք»-ով՝ «...ուզում ենք, մատաղ, Անդրանիկ զորավար լինենք»:

Գյուղացիներին խորթ են բազմաթիվ «բաճկոնավորները», որոնք մենատան կառուցման նպատակով եկել են գյուղ: Եթե հետաքրքրասեր ամբոխի միջով այս ու այն կողմ ուղեւորվող ծմակուտցիները բաճկոնավորների համար «եզ» են, ապա վերջիններն էլ գյուղացիների աչքում «օտար մարդիկ են»: Գյուղացիների վերաբերմունքը ան-

տառտնտեսության ղեկավարի նկատմամբ ոչ միայն բարեկամական չէ, այլեւ լցված է խռովքով ու զայրույթով, սակայն ոչ թշնամությամբ. «Դա տնեցու զայրույթ էր, բայց նա մեզ հենց թշնամու տեղ էր դնում, եւ այդուհանդերձ մեր արարքը նույնպես մեծ տնեցու եղավ – ծոծրակը մի ձեռքով բռնած հրելով մի կողմ քշեցինք...»:

Անտառտնտեսության ղեկավարը ուզում է սեփական նպատակներին ծառայեցնել նաեւ «ջաղացատեղին»: «Վերեւներից» կարգադրել են՝ ջրաղացը տալ՝ ում պետք է, իսկ կարգադրողը «պինդ կրունկ է» եւ ցանկալի չէ, որ Ռոստոմը տակն ընկնի: Ռոստոմը պայքարում է նաեւ այդ որոշման դեմ, մինչեւ պարզվում է ամենացավալին. «Պատրաստի ալյուր ենք ստանում, ավերակ ջաղացը մեր ինչի՞ն է պետք»,-ասում է անտառտնտեսության ղեկավարը:

Ռոստոմը, թեեւ ծմակուտցի չէ, սակայն ամենքը նրան համարում են բնիկ եւ ինքը շատ լավ է հասկանում դրա խորհուրդն ու իր առաքելությունը:

Եղել է մի ժամանակ, որ ներկայիս թափուր դպրոցի տեղում այգի է եղել, որը պատկանել է Ռոստոմի պապին: Դպրոցը, որտեղ ինքը սովորել է, որտեղ այժմ ձիու ոտնաձայները արձագանք են տալիս, կառուցվել է հետո. «Ինչպես որ գերեզմանոցն է պառավում, ինչպես որ մեղվի փեթակն է քաղցած ձմեռվա մեջ հանգչում - մենք դեռ չէինք հավատում, որ դպրոցն այդպես մարել է, կյանքը իր հին կեղեւն այստեղ լքել ու ինքը հեռացել է քաղաք, բայց այդպես էր...»: Ռոստոմը պայքարում է հանուն անտառի վերականգնման, հանուն դպրոցի վերաշինության, հանուն գոմի ու ջրաղացի պահպանության: «Ռոստոմը պարզ գիտակցում է, որ ընդդիմանալ համատարած ու ընդգրկուն պրոցեսներին կամ ետ բերել անցյալը, իսկապես, անհնարին է: Իսկ ահա որոշ կորուստների կանխումը ոչ միայն հնարավոր է, այլեւ անհրաժեշտ», - նշում է Ս. Փանոսյանը:

Ծմակուտի անտառտնտեսության ղեկավարը, որն աշխարհի թաքուն տեր է հիշեցնում, երբեմն քթի տակ ծիծաղում է Ռոստոմի վրա, սակայն հոգու խորքում այլ զգացողություններ ունի. «...Բայց նա մեզ նաեւ ատում էր կամ նախանձում էր, թերեւս, մեր առողջ հզորության, թերեւս մեր ներքին միամտության եւ աչքի լիության համար, մի խոսքով՝ աշխարհի ու մարդկանց մասին նրա պատկերացման կաղապարը մեր կերպարը չէր վերցնում»: Իհարկե, նա չէր կարող ըմբռնել Ռոստոմի մարդկային հատկանիշները, նրա դիրքավորումը կորսվող պապենական ժառանգությունների նկատմամբ, քանզի լինելով ընդամենը անտառտնտեսության ղեկավար, չէր կարող հասկանալ գյուղացիների օրգանական կապը Ծմակուտի հետ: Նա զուտ պետական պաշտոնյա էր, որը եկել ու բախվել էր ծմակուտցիների համառությանը, հայրենի գյուղում իրենց տանուտեր զգալու նրանց իրավունքին եւ պարտականությանը, եւ դրանք այնքան բնական էին, որ պաշտոնական իրավունքով հաղթահարելի չէին: Ավելի ուշ Ռոստոմը ցավով արձանագրում է, որ ծմակուտցիների տանուտիրական այդ գիտակցության մեջ ժամանակի ընթացքում շոշափելի փոփոխություններ են տեղի ունեցել. «Այդ՝ փոքր հայրենիքի, փոքր հայրենիքում մարդու ազատության եւ օտար վայրերում մարդու անազատության ժամանակներն անցել էին, ոչ ոք այստեղ օտարություն չէր քաշում,- եզրակացնում է Ռոստոմը,- օտարը, թերեւս, մենք էինք՝ մեր հին ժամանակներից ընկել էինք նոր ժամանակներ»:

/շարունակելի/

Ռուզան Վարդանյան

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Գավառի պետական համալսարանի ամենամյա՝ 29-րդ միջազգային գիտաժողովի 4-րդ բաժանմունքում տեղի ունեցած քննարկումները նվիրվել են տնտեսագիտության արդի հիմնահարցերին:

Գիտաժողովի աշխատանքը ղեկավարել է ԳՊՀ կառավարման եւ ֆինանսների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Սամվել Ամիրխանյանը, ով հանդես է եկել «Հանքարդյունաբերող կազմակերպությունների գործունեության կառավարման գնահատումը եւ բարելավման ուղիները «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի օրինակով» թեմայով՝ ԳՊՀ տնտեսագիտություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Արմինե Սաֆոյանի համահեղինակությամբ ներկայացված զեկուցով:

ԳՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Հակոբ Ղուլոյանն անդրադարձել է տարածաշրջանային բարձրագույն ուսումնական հաստատությունների դերին եւ տվյալ տարածաշրջանի «կանաչ» տնտեսության ու կայուն զարգացման վրա ազդեցությանը: «Կանաչ» տնտեսության ընդհանուր բնութագրի եւ անցման հիմնախնդիրների վերաբերյալ բովանդակալից զեկուցում է ներկայացրել ԳՊՀ կառավարման եւ ֆինանսների ամբիոնի եւ ՀԱՊՀ դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Դավիթ Անդրոյանը:

Հայաստանի Հանրապետությունում «Կանաչ» տնտեսության զարգացման հեռանկարների վերաբերյալ համահեղինակությամբ պատրաստել են զեկուցում նաեւ Սամվել Ամիրխանյանը եւ ԳՊՀ ֆինանսներ բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Ասատրյանը:

Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական խարդախությունների հիմնախնդրին է նվիրվել ԳՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կարեն Մամիկոնյանի զեկուցումը:

«Կրիպտոակտիվների կարգավորումը Հայաստանում. ԵՄ եւ ԱՄՆ փորձի համեմատական վերլուծություն» թեմայով զեկուցումով հանդես է եկել ՀՊՏՀ տեղեկատվական համակարգերի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների բիզնեսի ամբիոնի ասպիրանտ Լեւոն Արքելաթյանը: Գիտական հոդվածի համահեղինակն է նույն ամբիոնի վարիչ Արմեն Ղազարյանը:

ԳՊՀ կառավարման եւ ֆինանսների ամբիոնի դասախոս Աստղիկ Հովեյանն անդրադարձել է համայնքային զարգացման հիմնախնդիրների վերլուծությանը եւ զարգացման հեռանկարների գնահատմանը արժեշղթաների կիրառման մոդելի շրջանակում:

ՀՀ արդյունաբերությանը, դրա զարգացման միտումներին է նվիրվել ԳՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոսներ Վալերի Առաքելյանի եւ Սեւակ Մարկոսյանի համահեղինակությամբ պատրաստված զեկուցումը:

«Ամբողջական արդյունքային լուծումների մեջ իրականությանը նայելու հնարավոր տարբերակներից մեկը Գավառ համայնքի/քաղաքի՝ Երեւանի հետ համեմատության օրինակով» թեմայով հանդես է եկել ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արմինե Սչանյանը:

Զեկուցումներն ուղեկցվել են էին բովանդակալից քննարկումներով:

-Ներկայացված առաջարկություններն օգտակար կլինեն ձեռնարկությունների, կազմակերպությունների, համայնքների հետագա գործունեությունն ավելի արդյունավետ կազմակերպելու, ,կանաչ տնտեսությանն անցման հիմնախնդիրները գիտականորեն վերլուծելու առումներով, ինչպես նաեւ կօգնեն բակալավրիատի եւ մագիստրատուրայի ուսանողներին՝ գիտահետազոտական աշխատանքներ կատարելիս,-նշեց գիտաժողովի աշխատանքները ղեկավարող Սամվել Ամիրխանյանը:

ԳՊՀ արտաքին կապերի եւ լրատվության բաժին

ԳՊՀ-ՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է «ԳԱՎԱՌԻ ԲԱՆԱՐՎԵՍՏԻ ՄԵՐՕՐՅԱ ԴՊՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԲԱՑ ԴԱՍ

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում կայացել է գիտագործնական ուղղվածությամբ «Գավառի բանարվեստի մերօրյա դրսեւորումները» խորագրով բաց դաս, որը վարել է Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Լուսինե Ղռեջյանը:

Բաց դասին ներկա են եղել հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանողներ, պրոֆեսորադասախոսական կազմի անդամներ, նաեւ՝ Գավառի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտները, ովքեր հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Լուսինե Հովհաննիսյանի ղեկավարմամբ իրականացնում էին նախագծային աշխատանք՝ «Բանավոր պատմությունների գանձարան» թեմայով:

Բաց դասի ընթացքում Լուսինե Ղռեջյանը հանգամանորեն ներկայացրել է Գավառի տարածաշրջանի բանահյուսական ժառանգության հարուստ պատմությունը, անդրադարձել դաշտային բանահավաքչական աշխատանքների մեթոդաբանությանը, բանագիտական նյութերի գրառման եւ հրատարակման գործընթացներին: Հատուկ անդրադարձ է կատարվել Գավառի տարածաշրջանի բանահյուսության արդի վիճակին եւ կենսունակությանը ժամանակակից սոցիալ-մշակութային պայմաններում:

Դասն անցավ փոխներգործուն մեթոդներով, ակտիվ հարց ու պատասխանի ձեւաչափով: Աշակերտները ներկայացրին նախագծային աշխատանքների շրջանակներում իրենց գրառած բանահյուսական պատառիկներն ու նյութերը: Լուսինե Ղռեջյանը յուրաքանչյուր թեմայի շուրջ տվեց մասնագիտական պարզաբանումներ, ուղղորդեց սովորողներին գիտական ճշգրիտ ձեւակերպումների հարցում: Ամփոփելով բաց դասը՝ Լուսինե Ղռեջյանը կարեւորեց ազգային մշակույթի եւ բանարվեստի ավանդույթների շարունակականության ապահովմանն ուղղված աշխատանքները եւ երիտասարդ սերնդի դերը ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման ու արժեւորման հարցում:

ԳՊՀ արտաքին կապերի եւ լրատվության բաժին

ԳԱՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է «ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՕՊԵՐԱՅԻՆ ԵՐԳԻՉՆԵՐ» ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Գավառ քաղաքում անցկացվել է «Մարզերում երիտասարդ օպերային երգիչներ» համերգային ծրագիրը:

«Տաղանդավոր երիտասարդների զարգացման հիմնադրամ»-ի նախաձեռնությամբ եւ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ շուրջ տաս տարի է, ինչ ՀՀ մարզերում կազմակերպվում եւ անցկացվում է «Մարզերում երիտասարդ օպերային երգիչներ» համերգային ծրագիրը:

Հերթական համերգային ծրագիրն անցկացվել է Գավառի Հայրապետ Խաչատրյանի անվան արվեստի դպրոցի համերգասրահում: Համերգային ծրագրից առաջ Ալ. Սպենդիարյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի առաջատար մեներգչուհի Օֆելյա Համբարձումյանի կողմից Գեղարքունիքի մարզի արվեստի եւ երաժշտական դպրոցների վոկալի դաստուների եւ վոկալային լավագույն տվյալներ ունեցող 30 սաների համար անցկացվել են վարպետաց դասեր, որին հաջորդել է համերգային ծրագիր՝ նվիրված հայ անվանի օպերային երգիչ, բեմադրիչ, Լիտվայի վաստակավոր արտիստ Գեղամ Գրիգորյանի 75-ամյա հոբելյանին եւ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի երիտասարդական օպերային ծրագրի հիմնադրման 10-րդ տարեդարձին:

Գավառում կայացած համերգային ծրագրի ընթացքում հանդես են եկել Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի երտասարդական օպերային ծրագրի (Young Artists Opera Program) մասնակիցներ Արփի Սինանյանը (սոպրանո), Կառլեն Գալստյանը (կոնտրտենոր), Անահիտ Մարտիրոսյանը (սոպրանո), Գայանե Հովհաննիսյանը (սոպրանո), Արման Գրիգորյանը (բարիտոն), Ռոզի Խոլյունցը (սոպրանո), Մերի Օհանյանը (մեցցոսոպրանո), Հայկ Փոդրատչյանը (բարիտոն) եւ ծրագրի շրջանավարտ Օֆելյա Համբարձումյանը: Ծրագրի ղեկավարն է Լեւոն Ջավադյանը, կոնցերտմայստերը՝ դաշնակահար Լիլիթ Աբովյանը:

Համերգին հնչել են հայ եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Վարպետաց դասերին եւ համերգային ծրագրի իրականացմանն աջակցել են Գավառի համայնքապետարանը եւ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունը:

Արփիկ Չքոլյան

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԱՉՔԻ ԵՆ ԸՆԿԵԼ «ԷՏՅՈՒԴ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Կոմիտաս Կարապետյանի անվան գեղարվեստի դպրոցի աշակերտներն աչքի են ընկել «ԷՏՅՈՒԴ» միջազգային մրցույթ-փառատոնում:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, մրցույթ-փառատոնում հատուկ մրցանակի է արժանացել Զոյա Ղազարյանը: 1-ին կարգի մրցանակակիրներ են դարձել Զոյա Ղազարյանը եւ Էլմիրա Մարտիրոսյանը, 2-րդ կարգի մրցանակակիրներ՝ Դավիթ Գասպարյանը, Տարոն Ղազարյանը, Ժասմեն Սահակյանը, Շուշաննա Սահակյանը, 3-րդ կարգի մրցանակակիրներ՝ Հայկ Շաբոյանը, Ռուբեն Մալոյանը, Նեկտար Մուրադյանը, Էլեն Գրիգորյանը, Սոֆի Կարապետյանը: Դիպլոմներով պարգեւատրվել են դասատուներ Սուսաննա Ալեքսանյանը, Գայանե Ասլանյանը, Հակոբ Հակոբյանը, Նարեկ Խաչատրյանը, Լիանա Ասատրյանը:

Մրցանակակիրներին եւ նրանց ուսուցիչներին օրերս ընդունել է Վարդենիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Մկրտչյանը:

Նա բարձր է գնահատել մանկական գեղարվեստի դպրոցի դերակատարությունը համայնքի մշակութային կյանքի զարգացման գործում՝ ընդգծելով, որ շնորհալի երեխաների հաջողությունները համայնքի հպարտությունն են:

Կարեն Մկրտչյանը շնորհավորել է սաներին՝ արձանագրած հաջողությունների համար, մաղթել նոր ստեղծագործական նվաճումներ եւ վստահեցրել, որ համայնքապետարանը շարունակելու է աջակցել մշակութային կրթության զարգացմանն ու պատանի տաղանդների խրախուսմանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ դպրոցի գործունեությանը, կրթամշակութային ծրագրերին եւ ստեղծագործական ձեռքբերումներին վերաբերող հարցեր:

«Գեղամա աշխարհ»

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎԵԼ Է ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՇԱՐՔԱՅԱՆ

Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի կողմից Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքին նվիրաբերվել է ուկրաինական արտադրության ժամանակակից շարքացան:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, Վարդենիս համայնքի ղեկավարին փոխարինող Կարեն Մկրտչյանն ընդունել է Հայաստանում Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի պատվիրակության ներկայացուցիչներին՝ Լոգիստիկայի ղեկավար Գեորգի Պողոսյանին, Տնտեսական անվտանգության ծրագրերի ղեկավար Ստեփան Գրիգորյանին, Քաղաքական եւ գործառնական հարցերով խորհրդատու Ավետիք Փաշայանին, Տնտեսական անվտանգության բաժնի ներկայացուցիչ Նարինե Քոչարյանին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են համատեղ ծրագրերն ու հումանիտար աջակցությանն ուղղված քայլերը:

Համագործակցության շրջանակներում ԿԽՄԿ-ն Վարդենիս համայնքին նվիրաբերել է ուկրաինական արտադրության «ELVORTI ASTRA 3.6» ժամանակակից շարքացան:

-Նվիրաբերված սարքավորումը կիրառվելու է սահմանամերձ բնակավայրերում գյուղատնտեսական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար: Վարդենիսի համայնքապետարանը շնորհակալություն է հայտնում Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեին՝ համայնքի կողքին լինելու եւ ցուցաբերած կարեւոր աջակցության համար»,- ներկայացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ՆՇՎԵԼ Է ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԾՆՆԴՅԱՆ 102-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Գեղարքունիքի մարզային գրադարանի արվեստի բաժինը կազմակերպել է միջոցառում՝ նվիրված աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրի ծննդյան 102-րդ տարվան:

Ինչպես տեղեկացրեց Գեղարքունիքի Վ. Պետրոսյանի անվան մարզային գրադարանի տնօրեն Մարիամ Համբարձումյանը, միջոցառման ընթացքում ներկայացվել են մեծ արվեստագետի հարուստ ստեղծագործական ժառանգությունը, կյանքի ու ստեղծագործական ուղին, ինչպես նաեւ՝ հայ ժողովրդին ցուցաբերած նրա անգնահատելի նվիրումն ու աջակցությունը:

Անդրադարձ է կատարվել նաեւ Շառլ Ազնավուրի դերասանական գործունեությանը եւ համաշխարհային ճանաչում ունեցող երգիչների հետ ունեցած ստեղծագործական համագործակցություններին:

Ցերեկույթի ընթացքում հնչել են մեծ շանսոնյեի սիրված երգերը՝ երգիչներ Լիլյա Հովհաննիսյանի, Գրիգոր Բալագոզյանի, ինչպես նաեւ՝ Գավառի արվեստի դպրոցի երգչախմբի կատարմամբ (ղեկավար՝ Նարինե Գոզեյան):

Միջոցառումը վարել է գրադարանի թատերական խմբակի ղեկավար Անուշ Զանգիզորյանը՝ ստեղծելով ջերմ ու հուզիչ մթնոլորտ:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԱՅՍ ՏԱՐՎԱ ՄԱՅԻՍԻՆ ԳՐԱՆՑՎԵԼ Է 74 ԾՆՈՒՆԴ

Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում 2026 թվականի մայիսին գրանցվել է 74 ծնունդ՝ 50 տղա եւ 24 աղջիկ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչությունից, 27 երեխա ծնվել է Մարտունու ծննդատանը, 21 երեխա՝ Սեւանի, 14 երեխա՝ Գավառի, 11 երեխա՝ Վարդենիսի բժշկական կենտրոններում, 1 երեխա՝ Ճամբարակի առողջության կենտրոնում:

Ի տարբերություն նախորդ ամիսների՝ մայիս ամսին նկատելիորեն գերակշռել է տղա երեխաների թիվը՝ աղջիկ երեխաների համեմատ ավել լինելով 26-ով:

2025 թվականի մայիսին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում ծնվել է 76 երեխա՝ 43 տղա եւ 33 աղջիկ:

Խոսրով Խլղաթյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ Է 12 ՀԱԶԱՐ 230 ՀԵԿՏԱՐ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ

Գեղարքունիքի մարզում 2026 թվականի մայիսի 29-ի դրությամբ կատարվել է 12 հազար 230 հեկտար գարնանացան:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից,Գեղարքունիքի մարզի տնտեսություններում արդեն ցանվել է 6750 հեկտար գարի, 4142 հեկտար կարտոֆիլ, 369,5 հեկտար կերային մշակաբույսեր, 436,3 հեկտար գարնանացան ցորեն, 207 հեկտար վարսակ, 153 հեկտար լոբի, 37 հեկտար այլ հացահատիկ, 34 հեկտար ոլոռ, 5 հեկտար ոսպ, 5 հեկտար սիսեռ, 9 հեկտար գազար, 2 հեկտար վարունգ, 3 հեկտար լոլիկ, 8,4 հեկտար սեղանի ճակնդեղ, 44 հեկտար բանջարանոցային այլ մշակաբույսեր, 3,1 հեկտար սոխ, 18 հեկտար տեխնիկական մշակաբույսեր, 2 հեկտար այլ կերային մշակաբույսեր:

2025 թվականին կատարված աշնանացան ցորենի 14 հազար 770,5 հեկտար ցանքերը, ըստ մոնիտորինգի արդյունքների, հաջող են ձմեռել եւ կենսունակ են հետագա աճի ու զարգացման համար:

Գարնանացանի աշխատանքները որոշակիորեն ուշացել են եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով:

Գարնանացանը Գեղարքունիքում կշարունակվի նաեւ հունիսի առաջին կեսի ընթացքում:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 05. 06. 2026 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: